



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

Archbishop Toros Matossian, Primate

Թիւ 21611

Փետրուար 24, 1969

Արժանաշնորհ
Տ. Առնակ Բհնյ. Գասպարեան
Հովիւ Ս. Թովմաս Հայց-Նկեղեցւոյ
եւ Սախազահ Ժխական Խորհուրդի
Թենեֆլայ.

Սիրելի Տէր Առնակ,

Ստացած ենք 1969 Փետրուար 17 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը հազորդէք թէ 2եր նախագահութեամբ՝ Փետրուար 16ին զուժարուած 2եր ժխական ժողովին մէջ կատարուած է ժխական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր ժխական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան արամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ժխական Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց եւ եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու ատենապետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք շեզի եւ 2եր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Սուրբ Նկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ

Տիարք՝ Վիթթրր Արզումանեան
Բէյմօստ Գրաֆէլ
Արթըր Օջի
Տիգրան Մելիքեան
Վինսէնթ Շամամեան
Աստրիւ Սահակեան